ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱՂԱՎՆԱՁՈՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ

2015 թվականի մարտի 16-ին ժամը 15^{00}-ին Աղավնաձորի համայնքապետարանում տեղի ունեցավ համայնքի ղեկավարի տարեկան հաշվետվությունը:

Ներկա էին մարզպետի տեղակալ Ս.Թարվերդյանը, ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Ն.Սիմոնյանը , ֆինանսական և սոցիալ-տնտ. զարգացման վարչության պետ Ռ.Հայրապետյանը, համայնքի ղեկավարի աշխատակազմը , համայնքի ավագանու անդամներ , համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարներ, , համայնքի ակտիվ բնակիչներ:

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հաշվետվություն 2014թվականին կատարված աշխատանքների և հետագա ծրագրերի մասին :

1.Հաստատվել է համայնքի 2014 թվականի բյուջեն , կատարվել է համայնքի բնակչության և անասունների հաշվառում:

2.Ապահովվել է փողոցային լուսավորությունը:

3.Սիստեմատիկ ամիսը 3 անգամ ըստ գրաֆիկի գյուղում կատարվել է աղբահանություն :

4. Կատարվել է փողոցների գրունտի լիցք, բարեկարգվել է շուրջ 10 կմ ճանապարհ :

5.Վերացվել է խմելու ջրի ներքին ցանցի և կոյուղու վթարները ,բյուջեից ծախսվել 950.0 հազ.դրամ:

6.Սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշները տարվա կտրվածքով ունի հետևյալ տեսքը

հողի հարկ - 100.2 %

գույքահարկ - 121.7 %

հողի վարձավճար -100.7 %

տեղական տուրքեր -110.6 %

տեղական վճարներ -100.0 %

ընդամենը սեփական եկամուտներ -102.1 %

7.Ապահովվել է համայնքի մանկապարտեզի, արվեստի դպրոցի ,«Աղավնաձոր» ՀՈԱԿ-ի բնականոն գործունեությունը ավագանու հաստատված աշխատակարգով , բյուջեից հատկացվել է 19021.6 հազար դրամ:

8. Համայնքի մանկապարտեզի համար ձեռք է բերվել նոր գույք մանկական սեղաններ և աթոռներ , բյուջեից ծախսվել է 450.0 հազար դրամ:

9.Ներկրվել և համայնքի բնակչությանն է տրամադրվել

70.0 տոննա ազոտական պարարտանյութ

4250 լիտր դիզ.վառելիք

10.Համայնքի անապահով ընտանիքներին տրամադրվել էդրամական օգնություն 1690.0հազ.դրամ:

11.Քաղաքաշինության բնագավառում համայնքի ղեկավարն ընդունել է որոշումներ, որոնք վերաբերվում են փաստաթղթերի օրինականացմանը /հասցեների որոշումներ, շինարարության

թույլտվություններ, հողհատկացման քաղվածքների տրամադրում և այլն/

12. Համայքի ղեկավարի մոտ կատարվել է բնակիչների ընդունելություն ,լսվել է նրանց պահանջները, տրվել համապատասխան ընթացք :

Համայքի ղեկավարը նշեց, որ առաջիկայում նախատեսվում է անցկացնել եղեռնի 100 ամյակին նվիրված միջոցառում և խաչքարի տեղադրում:

Տեղի ունեցան քննարկումներ ոռոգման ջրամբարի , չզազաֆիկացված թաղամասերի մանկապարտեզում առկա խնդիրների, ծիրանի և խաղողի բերքի իրացման հետ կապված խնդիրների շուրջը :Համայնքի ղեկավարը հատկապես կարևորեց այն փաստը, որ ծարդիկ տարիներ առաջ վարձակալած կամ գնած վարելահողերի վրա բազմամյա տնկարկներ են հիմնել,որոնք արդեն խաղողի և պտղատու այգիներ են , սակայն հողատեսքի փոփոխություն չի կատարվել:

Բարձրացվեցին համայնքին վերաբերվող բազմաթիվ հարցեր, որոնց համայնքի ղեկավարը տվեց պարզաբանումներ ներկայացրեց տվյալ խնդիրների լուծման հնարավոր ուղիները:

Հաշվետվությունը ամփոփեց փոխմարզպետ Ս.Թարվերդյանը, առաջարկելով համայնքի ղեկավարի տարեկան գործունեությունը գնահատել բավարար :

[illegible]ագրի քարտուղար Ա.Գրիգորյան